- էլեկտրաէներգիայի միացումը պետք է կատարվի ինվենտար գլխավոր ցածրավոլտային վահանակի միջոցով, որը կոմպլեկտավորված կլինի անջատիչով, պահպանիչով, հաշվարկի սարքերով, տեղադրված փակվող մետաղական արկղում:
- կարելի է օգտագործել համապատասխան հզորության շարժական էեկտրակայաններ:

Շինհրապարակի ժամանակավոր ջրամատակարարումը պետք է իրականացնել առավելագույնս օգտագործելով տեղական ջրաղբյուրները:

**1.8 Հիմնական մեքենաները և մեխանիզմները**

Շինարարական մեքենաների, մեխանիզմների և սարքավորումների տեսակները և տիպերը տրված են խորհրդատվությամբ և կարող են ենթարկվել փոփոխության, ելնելով գոյություն ունեցող տեխնիկայի առկայությանը կամ ձեռքբերման հնարավորությունից, սակայն նրանք պետք է ունենան նույնատիպ տեխնիկական ցուցանիշներ:

<u>Հիմնական մեքենաների և մեխանիզմների մոտավոր քանակություն</u>

| №№ Դ/Դ | Մեքենաների և մեխանիզմների անվանում | Մեքենաների մակնիշը և տիպը | Քանակ, հատ |
|---|---|---|---|
| **1** | **2** | **3** | **4** |
| 1 | Ավտոինքնաթափ | 10տ բեռնունակ. | 3 |
| 2 | Ավտոամբարձիչ | բեռնատվ. 36տ | 1 |
| 3 | Ավտոբետոնախառնիչ | Տարողությունը 2մ3 | 1 |
| 4 | Ավտոբետոնապոմպ | 10մ3/ժամ արտադրողականությամբ | 1 |
| 5 | Բուլդոզեր | 59կՎտ | 1 |
| 6 | Էքսկավատոր | 0.65մ3 շերեփի տարողությամբ | 1 |
| 7 | Ինքնագնաց գլդոն | Առնվազն 6տ | 1 |
| 8 | Ձեռքի տոփիչ | 40կգ | 2 |
| 9 | Ասֆալտատեղադրիչ մեխանիզմների լրակազմ | - | 1 |
| 10 | Զոդման ապարատ պողպատի համար | | 1 |
| 11 | Զոդման ապարատ պոլիէթիլենի համար | | 1 |
| 12 | Խորքային վիբրատոր | Իվ | 2 |
| 13 | Մակերևույթային վիբրատոր | | 2 |

Պահանջվող մակնիշի բետոնի պատրաստումը առաջարկվում է կատարել մոտակա կենտրոնացված բետոնախառնիչ հանգույցում, որը ապահովված կլինի չափաբաժին կշռող սարքավորումներով և կապահովի նախագծում նախատեսված բետոնի դասը իր բոլոր ցուցանիշներով:

**1.9 Շինարարության տևողությունը**

Շինարարության նորմատիվ ժամկետը որոշվել է ըստ օրացույցային ժամանակացույցի և կազմել է I փուլի համար 2 ամիս իսկ II փուլի համար 4 ամիս, ներառյալ աշխատանքերի համատեղման, սեյսմիկայի գործակիցները, ինչպես նաև նախապատրաստական շրջանը 15օր:

Շինարարական պայմանագիրը կնքելիս Կապալառուն պարտավոր է ժամանակին կազմակերպել շինարարության անհրաժեշտ նյութատեխնիկական և աշխատանքային ռեսուրսների մատակարարումը, որը կապահովի պայմանագրով նշված շինարարության ժամկետի պահպանումը:

## 1.10 Աշխատանքային կադրեր

Շինարարության աշխատանքների իրականացման համար ներգրավված բանվորական ուժը հիմնականում պետք է լինի բարձր որակավորում ունեցող մասնագետների բրիգադ: Ոչ մասնագիտական բանվորական ուժի կիրառումը պետք է հասցվի նվազագույնի: Աշխատուժի բրիգադիայի կազմը բերված է համաձայն ЕниР-ի նորմատիվային տվյալների:

Բանվորների առավելագույն քանակը, ներառյալ այլ տնտեսությունների (подсобное хозяйство) կկազմի 49x1.3=64 մարդ:

Շինարարության ընդհանուր ղեկավարությունը իրագործվելու է տեղամասի պետի և աշխղեկի կողմից:

## 1.11 Աշխատանքների պահպանությունը

Այս բաժնում բերվում են հարցերի այն շրջանը և դրանց կատարումը կապված շինարարական աշխատանքների պահպանության նորմատիվային պահանջների կատարման և հսկողության հետ:

Անվտանգության նորմերը և կանոնները, որոնք տարածվում են է շին-մոնտաժային աշխատանքների վրա, անկախ այդ աշխատանքների գերատեսչական ենթակայությունից, թելադրվում են СНиП III-4-80*:

Համաձայն գործող անվտանգության նորմատիվ պահանջների՝ աշխատողները պետք է ապահովվեն անհատական պաշտպանիչ միջոցներով, ելնելով տվյալ աշխատանքների կատարման վնասակարության և վտանգավորության աստիճանից:

Տարածված է հավաքովի էլեմենտների առասանման երեք եղանակ՝ էլեմենտի առասանում իր շուրջը (в обхват), կեռիկներից (за петли), անցքերից (за отверстия): Ապամոնտաժվող հավաքովի երկաթբետոնյա էլեմնտների առասանման (строповка) եղանակը առաջարկվում է շրջային (в обхват), հաշվիառնելով այն փաստը, որ հնարավոր է մոտնաժման ժամանակ կեռիկների վնասվածությունը, անցքերի վնասվածությունը:

Առասանման տեղերը պետք է լինեն առասանվող էլեմնտների ծանրության կենտրոնից դուրս:

Առաաանի թեքման օպտիմալ անկյունը հորիզոնին կազմում է $45^0$: էլեմենտի քաշից, զաբարիտներից և բեռնաբռնիչ սարքի բեռնունակությունից կախված թույլ է տրվում այդ անկյան ավելացում կամ փոքրացում $15^0$ աստիճանով:
$30^0$ աստիճանից պակաս կամ $60^0$ աստիճանից ավել առաաանի ճյուղերը տեղակայել թույլ չի տրվում:

Առանց կեռիկների էլեմենտների, որոնց առաաանման տեղերը հայտնի չէն, բարձրացման հնարավորության ստուգման համար անհրաժեշտ է իմանալ բեռի քաշը առաաանի ճյուղերի թեքության անկյունը հորիզոնին: Այդ դեպքում բեռնաբռնիչ սարքի ճյուղերին բեռնվածությունը (нагрузка) որոշվում է ստորև բերվող աղյուսակի տվյալների:

| Առաաանիի տիպը | Բարձրացվող բեռի քաշը | | | |
|---|---|---|---|---|
| | Մեկ ճյուղով | Երկու ճյուղով առանձին | Երկու միացված ճյուղով | Չորս ճյուղով առանձին |
| Երկճյուղանի | 0,6 Qc | Qc | Qc | - |
| Չորս ճյուղանի | 0.3 Qc | 0.5Qc | 0.5Qc | Qc |

Որտեղ` Qc – առաաանիի բեռնունակությունը:
Ելնելով աղյուսակից ստացված բեռնվածության տվյալներից, առաաանիի ճյուղերի վրա, առանց կեռիկների բեռների վրա նշվում են առաաանման տեղերը:
1,5մ –ից ավել բարձրությունների վրա աշխատանքները իրականացվում են քանդվող-սարքվող լաստակների վրայից:
Կառույցի քարե շարվածքի, միջանկյալ պատերի կառույցի ներսում գտնվող այլ մասերի քանդումից առաջացած շինաղբը բարձվում է ինվենտար տակառիկի մեձ և ամբանձիչով տեղափոխվում ավտոինքնաթափի մեջ:
Ապամոնտաժված հավաքովի երկաթբետոնյա էլեմենտների և մնացած քանդված նյութերի թափոնները տեղափոխվում են 16-կմ թափոնակուտ:
*Աշխատանքների իրականացման անվտանգության տեխնիկա*
Վթարային իրավիճակների, վնասվածքների, հիվանդությունների առաջացման աղբյուր է հանդիսանում անվտանգության տեխնիկայի կանոնների խախտումը, որոնց նախազգուշացման համար պետք է ընդունվեն ստորև բերվող անհրաժեշտ միջոցառումներ

*Աշխատանքային պայմանների անվտանգության խախտման նախազգուշական միջոցառումները՝ երկաթբետոնյա կոնստրուկցիաների բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ։*

| Խաղտման հնարավոր հետևանքները | Խաղտման պատճառը | խաղտման նախազգուշական միջոցառումները |
|---|---|---|
| Դարսակի քանդվում, ամբարձիչի ընկնում | Պահեստավորման տեղամասի չպատրաստված հիմք | Հիմքի պատրաստում $3^0$ –ից ոչ ավել թեքությամբ, հիմքի խտացում, կամ ինվենտար սալերի տեղադրում, միջադիչների տեղադրում հենարանների տակ |
| Ամբարձիչի ընկնում, ճոպանների կտրում, արգելակների խափանում | Ամբարձիչի բեռնունակության գերազանցում | Բեռնունակության սահմանիչի տեղադրում, բեռի քաշի ստուգում |
| Ոչ ճիշտ առասանում (строповка) և կոնստրուկ-ցիայի տեղադրում, վնաս-վածքներ բռնիչ սարքերից, կառճատեսության նշաններ | Աշխատանքային զոնայի թույլ լուսավորում | Լրացուցիչ լուսավորման սարքերի տեղադրում, աշխատանքային զոնայի լուսավորության համար |
| Կոնստրուկցիաների խփում տրանսպորտին կամ դարսակին, ճոպանի լարում | Նախազգուշական ազդանշանների ոչ ճիշտ մատուցում | Առասանիչ բանվորների գիտելիքների ստուգում և նրանց ատեստացիա |
| Ամբարձիչի ժամանակից շուտ մաշում | Ամբարձիչի աշխատանքի ռեժիմի անհամապատաս-խանություն նրա օգտա-գործման պայմաններին (ամբարձիչի օգտագործում ավելի ծանր պայմաննե-րում, քան տրված է անձ-նագրում)։ Չնախատեսված աշխատանքային շարժում-ների համատեղում | Ամբարձիչի ժամանակի և բեռնունակության օգտագործման պարբերաբար ստուգում։ Ամբարձիչի կոնստրուկ-ցիային մանրակրկիտ ուսումնասիրություն |
| Էլեկտրական տրավմաներ | Աշխատանք էլեկտրական գծերի մոտ առանց թույլատվության (наряд-допуск), ԷՀԳ և ամբարձիչի, պահեստի հեռավորության գերազանցում | ԷՀԳ և ամբարձիչի, պահեստի թույլատրելի հեռավորության պահպանում |
| Տեղափոխվող կոնստրուկցիայից, առասանման սարքից վնասվածքներ | Ձայնային ազդանշանի բացակայում, նախազգուշական ազդանշանի ոչ ճիշտ մատուցում | Ազդանշանի պարբերաբար ստուգում, նրա աշխատանքի անսարքության վերացում։ Առասանող բանվորների գիտելիքների ստուգում և նրանց ատեստացիա |
| | Որակազրկված և մաշված բեռաբռնիչ սարքերի օգտագործում | Բեռաբռնիչ սարքերի պարբերաբար տեխնիկական վերահաստատում |

| | | |
|---|---|---|
| Ամբարձիչով վրաերթ բանվորների վրա, ամբարձիչի պտտվող մասերով բանվորների վնասում | Աշխատանքների կազմա-կերպման նախագծով (ԱԿՆ) հաս-տատված տեղաշարժման ուղեգծից շեղում, նյութերի և կոնստրուկցիաների տե-ղադրում տրանսպորտի և բեռնաբառձիչ մեխանիզմ-ների ուղեգծի վրա: Ամ-բարձիչի և կառույցի միջև թույլատրելի հեռավո-րության գերազանցում | Աշխատանքների իրակա-նացում համաձայն ԱԿՆ, ազդանշանային սարքի ստուգում և անսարքութ-յան վերացում: Թույլատրե-լի հեռավորության, ոչ պա-կաս քան 1մ, պահպանում |
| Բանվորի ժամանակից շուտ հոքնածություն, գլխապտույտ և փսխում | Աշխատանքների իրակա-նացում այն զոնաներում , որտեղ նորմաներից գերա-զանցում են աղմուկը, վիբ-րացիան, գազերի առկա-յությունը, աշխատան-քային զոնայի տեսադաշ-տի բացակայում | Աղմուկի, վիբրացիայի, գազավորման թույլատրելի նորմերի պահպանում, աշխատանքային զոնայի տեսադաշտի ապահովում |
| Մրսածության հիվանդություններ և ցրտահարում | Նորմաներով սահմանված ջերմաստիճանից ցածր պայմաններում աշխատանք | Աշխատանքի դադարեցում, տաքացվող տնակի տեղադրում |

Եթե շինարարության հրապարակում առկա են էլեկտրահաղորդիչ գծեր, ապա ամբարձիչը պետք է տեղակայվի 30մ –ից ոչ մոտիկ , ծայրամասային էլ.հաղորդիչ լարից: Եթե անհրաժեշտություն կա աշխատել 30մ-ից պակաս հեռավորության վրա, պետք է ձևակերպել կարգագիր - թույլատվություն, որտեղ նշվում են այդ աշխատանքի անվնաս պայմանները:

Բեռնաբարձիչի, տվյալ դեպքում ամբարձիչի, գործնեության զոնայում չպետք է լինեն խոտանված բռնիչ սարքեր:

Առասանման եղանակները և ձևերը որոշվում են նախապես և առասանման գրաֆիկական նկարագրությունը տրվում է առասանիչ բանվորներին, մեքենավարներին, կամ կախվում են տեսանելի տեղում ամբարձիչի մոտակայքում:

Ամբարձիչի պտտվող պլատֆորմի և տրանսպորտային միջոցի կամ կառույցի կողային մասի մինիմալ հեռավորությունը պետք է լինի ոչ պակաս քան 1մ: Տվյալ դեպքում մինիմալ հեռավորությունը կազմում է 1մ:

Մինիմալ հեռավորությունը ամբարձիչի սլաքի բլոկի և կեռիկի սարքի միջև (между блоком стрелы и крюковой обоймой) պետք է լինի ոչ պակաս քան 0,5մ:

Ամբարձիչով տեղափոխվող էլեմենտները պետք է բարձրացված լինեն 0,5մ-ից բարձր ճանապարհին հանդիպող առականերից:

Թույլ չի տրվում տեղափոխվող էլմենտը հենել ցանկապատին:

Բարձրացվող էլեմենտի քաշը չպետք է գերազանցի ամբարձիչի բեռնունակությունը սլաքի տվյալ թռիչքի դեպքում:

Արգելվում է տեղափոխել բեռներ, որոնց քաշը անհայտ է:

Թույլ չի տրվում բեռնման ճոպանի քաշում բեռի բարձրացման կամ իջեցման ժամանակ:

Թույլ չի տրվում բեռը թողնել ամբարձիչից կախված վիճակում աշխատանքի դադարի ժամանակ:

Առաասնման եղանակները պետք է բացառեն վեռնաշխատանքները (верхолазные работы) բեռը առասանից ազատելու համար:

Թույլ չի տրվում կատարել բեռնավորման և բեռնաթափման աշխատանքներ, եթե վարորդը գտնվում է մեքենայի մեջ:

Առասանման աշխատանքներին թույլ չեն տրվում այն բանվորները, որոնք չունեն առասանման թույլատվություն:

Եթե ամբարձիչի սպասարկման զոնան լիովին տեսանելի չէ ամբարձիչի մեքենավարի կաբինայից, առասանիչ բանվորի ազդանշանների հաղորդման համար լրացուցիչ նշանակվում է ազդանշան հաղորդող բանվոր:

Ամբարձիչի մեքենավարը կարող է դադարեցնել աշխատանքը, եթե կհայտնաբերվեն ամբարձիչի կոնստրուկցիայի ճաքեր և դեֆորմացիաներ, ճոպանի կտրվածք, արգելակման խախտումներ և այլն:

Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա թեքություն ոչ ավել քան $5^0$:

Բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը, որոնք օգտագործվում են բեռնման–բեռնաթափման աշխատանքների ժամանակ, պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին:

Շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն համաձայն ՇՆևԿ III-4-80* <Անվտանգության տեխնիկան շինարարության մեջ>:

### 1.12 Շրջակա միջավայրի պահպանության

Բոլոր անհրաժեշտ միջոցները կապված արտաքին միջավայրի պահպանության հետ, պետք է իրականացվեն Կապալառուի կողմից, համապատասխան կոմպետենտ մարմինների կարգադրությունների և ճարտարագետի հրահանգների:

Աշխատանքները պետք է կատարվեն այնպես, որպեսզի կանխվի արտաքին միջավայրի քայքայումը և մաքսիմալ պահպանվի բնական լանդշաֆտը:

## 1.13 Սոցիալական նախազգուշական միջոցառումներ շինարարության ընթացքում

1. Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանում սահմանված սոցիալական ռիսկերի մեղմացման միջոցառումների իրականացում:

Մասնավոր հողերի ժամանակավոր կամ մշտական օ•տա•րծումից խուսափում, իսկ այդպիսի անհրաժեշտության դեպքում՝ պատվիրատուի տեղեկացում:

2. Կապալառուի օժանդակ կառուցվածքների՝ պահեստներ, պահեստային հրապարակներ և այլն, տեղակայում հնարավորինս շինհրապարակի սահմաններում:

3. Ծառերի և շինությունների հեռացումից խուսափում, և այդպիսի աշխատանքների իրականացում միայն խիստ անհրաժեշտության դեպքում և միայն Պատվիրատուի թույլտվությունը ստանալուց հետո:

4. Շինարարական աշխատանքների իրականացում օրվա բնականոն ժամերին՝ այլապես խլացուցիչների տեղադրում:

5. Ժամանակավոր օգտագործած հողերի վերականգնում նախնական տեսքին:

6. Շինհրապարակի մաքրում և կարգի բերում, ինչպես նաև շինարարությունում աշխատող բանվորների բնակության հետ կապված սանիտարական միջոցառումների իրականացում:

7. Շինարարության մեջ աշխատողների (բանվորների) հիմնական քանակի ներ•րավում մոտակա բնակավայրերից, խրախուսելով կանանց, երիտասարդների և խոցելի խմբերի ներկայացուցիչների (ընտանեկան նպաստ ստացողներ, միայնակ կանայք՝ տնտեսության ղեկավարներ, թոշակառուներ և այլն) ներգրավումը: Բանվորների մնացած մասի տեղավորում մոտակա բնակավայրերում և մասնագիտացված շարժական շինություններում, որոնք ապահոված կլինեն ջրով և կոյուղով:

8. Շինարարության մեջ աշխատողների պարբերական հրահանգավորումների իրականացում տեխնիկական անվտանգության հարցերով:

9. Շինարարական աշխատանքների ավարտից հետո՝ վերականգնողական աշխատանքների իրականացում, տարածքի բարեկարգում, ներառյալ էսթետիկ տեսքը:

# *«ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՏԻՏԻԶՅԱՆՆԵՐ » ՍՊԸ*



Ի Ն Ժ Ե Ն Ե Ր Ա Ե Ր Կ Ր Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն
Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Ս Ի Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ի
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՏԱՐԱԾՔ

*Լիցենզիա ՔՊԼ 000804, 1-ին դաս*

Տնօրեն՝ Հ. Տիտիզյան

Երևան 2025թ.

**Բացատրական մաս**

Համաձայն «ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի և համապատասխան առաջադրանքի 2025 թվականի օգոստոս ամսին կատարվել են ինժեներա-երկրաբանական ուսումնասիրություններ ՀՀ Սյունիքի մարզ Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի բժշկական կենտրոնի տարածքի համար: Աշխատանքների իրականացման նպատակն է համաձայն Հայաստանի Հանրապետության նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի ՀՀ Սյունիքի մարզ Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի բժշկական կենտրոնի տարածքի նախագծային փաստաթղթերի մշակման համար անհրաժեշտ երկրաբանական տվյալների հավաքագրումը և համապատասխան հաշվետվության կազմումը: Վերը շարադրված խնդիրը լիարժեք լուծելու նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Ճարտարագիտաերկրաբանական հետազննություններ:
2. Ուսումնասիրվել է տվյալ տարածքի երկրաբանական կառուցվածքը: Նշված և հարակից տարածքներին վերաբերվող տարբեր աղբյուրներում զետեղված, նախկինում կատարված ինժեներաերկրաբանական հետազոտումների տվյալների հավաքում, կանոնակարգում, համադրում և վերլուծություն:
3. Տեղադիտական հետազննություններով վեր հանելու համար վտանգավոր երկրաբանական երևույթները և պրոցեսները /սողանք, քարաթափում, ճահճացում և այլ/:
4. Հորատանցքներով աշխատանքներ՝ նշված հրապարակներում լիթոլոգիական կտրվածքները, գրունտերի շերտերը ու նրանց հզորությունները, ինչպես նաև ստորգետնյա ջրերի առկայությունը, որոշելու նպատակով:
5. Օգտագործել այս տարածքում նախկինում կատարված լաբորատոր նյութերը կախված լիթոլոգիական կտրվածքների առանձնահատկություններից:
6. Նախկինում կատարված խախտված և բնական կառուցվածքի գրունտների փորձանմուշների լաբորատոր ուսումնասիրություններ դրանց ֆիզիկամեխանիկական բնութագրերի համար:
7. Դաշտային և ֆոնդային նյութերի կամերալ մշակում:

Վերը շարադրված աշխատանքների իրականացման արդյունքում կազմվել է տեղանքի ինժեներաերկրաբանական պայմանների մասին եզրակացություն:
УГБ-50М հաստոցով փորվել է 2 հատ հորատանցք՝ մեկը՝6գծ/մ խորությամբ,մյուսը՝ 10գխ/մ ծորությամբ,ընդ.՝16գծ/մ: Հորատանցքների հիման վրա կազմվել է երկրաբանա-լիթոլոգիական կտրվածք, ինչպես նաև օգտագործվել են ֆոնդային տվյալները: Հորատանցքների, արդյունքները և ֆոնդային նյութերի տվյալները թույլ են տալիս շերտերի նկարագրությունը տալ մինչև 8.0մ խորությամբ՝ համաձայն ըստ ՇՆՁ I-2.101-2002 (ձեռնարկ ՀՀՇՆ I-2.01-99 նորմերի):

## 1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գեոմորֆոլոգիական տեսակետից Հետազոտվող տարածքը գտնվում է Սյունիքի մարզում, Արաքս գետի ձախ ափին՝ ծովի մակերևույթից 650 մ բարձրության վրա: Մարզկենտրոն Կապան քաղաքից հեռու է 80 կմ դեպի հարավ-արևմուտք: Իրանի հետ սահմանից հեռու է 2-3 կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք :

Կլիման ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս վկայակոչել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22.01.24 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը: Հետազոտվող

տարածքը գտնվում է չափավոր շինարարակլիմայական գոտում՝ տաք ամառով, չափավոր ցուրտ ձմեռով: Ստորև ներկայացվում է շրջանի կլիմայական ցուցանիշները աղյուսակների տեսքով՝ըստ «Մեղրի» օթերևութաբանական կայանի տվյալների

- Տարեկան միջին ջերմաստիճանը 14.3 °C
- Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը 43°C
- Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -18°C
- Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը 61%
- Օդի հարաբերական խոնավությունը ամենացուրտ ամսվա 56%
- Օդի հարաբերական խոնավությունը ամենաշոգ ամսվա 38%
- Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 280-350մմ:
- Քամու միջին տարեկան արագությունը 1.3մ/վ:
- Բնահողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 12սմ:




Նկ. 3 Կլիմայական շրջանացման սխեմատիկ քարտեզ

<u>Հիդրոերկրաբանական տեսակետից</u> տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հիմքի կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ: ՈՒսումնասիրվող տարածքում փորված խորությունների սահմաններում գրունտային ջրեր չեն բացահայտվել, ըստ արխիվային նյութեր գտնվում են 20մ-ից խորը հորիզոններում:

**<u>Ֆիզիկաերկրաբանական</u>** վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ մեր ուսումնասիրվող տարածքում բացակայում են

**<u>Շրջանի սեյսմիկ պայմանները</u>** Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ -20.04.2020թ.-ի, տեղազննվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.4g արագացմամբ:



## Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը

Համաձայն կատարված ուսումնասիրությունների, հորատման տվյալների՝ (գրունտների լաբորատոր հետազոտությունների) ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են հետևյալ գրունտերը վերևից–ներքև: Երկրաբանալիթոլոգիական կտրվածքին մասնակցում հետևյալ 2 շերտերը՝

### ՇԵՐՏ 1

Ավազակավեր բացից-մուգ շագանակագույն, պինդ թանփրության միջին խոնավ, խճի, մանրախճի 15-20% պարունակությամբ, մանրահատիկ, հոծ, տեղ-տեղ ավազային ենթաշերտով : Դրանք էլյուվիա-դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներ են:Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՍՆԻՊ IV-2-84-ի (33 գ) III կարգ:

### ՇԵՐՏ 2

Գրանիտադիորիտներ, ամուր, հոծ, սպիտակահողագույն, տեղ-տեղ բեկորա-խճաքարային նստվածքներ մոտ 25% ավազա-խճավազային լրացումով: Ինտրուզիվ առաջացումներ են: Գրունտներն ըստ շահագործման դժվարության համաձայն (18բ) VI կարգ է:

## 1.. Տարածքից վերցված նմուշների ֆիզիկա-մեխանիկական հատկությունների որոշում

Աղյուսակ 1 .

| Հատկանիշի անվանումը | | Գրունտի անվանումը և շերտի համարը |
|---|---|---|
| | | 1 |
| Գրունտների անվանումները | | Ավազակավ |
| Ծավալային Խտությունը Տ/մ³ | ρ | 1,95 |
| Տեսակարար խտությունը գ/մ³ | ρ | 2,68 |
| Տեսակարար շաղկապվածություն, ԿՊա | C | 1,43 |
| Նորմատիվային տեսակարար շաղկապվածությունը ԿՊա | Cn | 1,27 |
| Ծակոտկենություն | e | 0.720 |
| Ծակոտկենության գործակից | n | 44.70 |
| Ներքին շփման անկյուն, աստ. | φ | 19˚50´ |
| Նորմատիվային ներքին շփման անկյուն) | φn | 180` |
| Ձևախախտման մոդուլը, ՄՊա | E | 19,0 |
| Բնական խոնավություն % | W | 24,13 |
| Գրունտի հաշվարկային դիմադրությունը կգ/սմ² | $R_0$ | 2,0 |
| Ընկրկելության գործակից տ/մ³ | $k_h$ | 2500 |
| Գրունտի համաձայն ՄՆԻՊ IV2-84-ի | աղ. 1 | III (33 գ) |
| Գրունտների կարգը ըստ սեյսմիկ հատկանիշերի ՀՀ ՇՆ 20.04.2020 | | III |

Աղյուսակ 1.1

| | Գրունտի անվանումը | Բնական խոնավություն, % | Խտությունը, տ/մ³ | | | Ծակոտկենություն,% | Խոնավությունը լրիվ ջրհագեցած վիճակում, % | Խոնավության աստիճանը | Ներքին շփման անկյուն, աստ. | Տեսակարար շաղկապվածությունը, կՊա | Ձևախախտման մոդուլը, ՄՊա | Հաշվարկային դիմադրությունը $R_0$, կգ/սմ² | Գրունտների կարգը ըստ սեյսմիկ հատկանիշներ ՀՀ ՇՆ 20.04.2020 | Անվանումն ըստ OCT 25100-2020 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Բնական վիճակում | Գրունտի մասնիկների | Կմախքի | | | | | | | | | |
| | | $W$ | $\rho$ | $\rho_s$ | $\rho_d$ | $n$ | $W_{sat}$ | $S_r$ | $\varphi$ | $C$ | $E$ | $R_0$ | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 16 | 17 |
| 4 | Գրանիտադի որիտ | 0,92 | 2.8 | 2.57 | 2.48 | 2.74 | 0,346 | 0,080 | $55^0 40'$ | 9,65 | 55.0 | 7.0 | I | հրաբխային |

***ՀՀ Սյունիքի մարզ Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի բժշկական կենտրոնի տարածքի ինժիներաերկրաբանական ուսումնասիրությունների հաշվետվության եզրակացություն:***

Կատարված հետազոտությունների և դրանց արդյունքների վերլուծությունը բերել են հետևյալ եզրակացության.

- Տեղամասի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են գրունտների 2 շերտ, ֆիզիկամեխանիկական բնութագրերի ցուցանիշները բերված են աղյուսակներ 1,1.1-ում:
- Տեղամասում մինչև 8մ հորատված հորատանցքների ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և ըստ արխիվային նյութերի գտնվում են խորը հորիզոններում:
  - Ուսումնասիրվող տեղամասում նախագծվող շինություն կառուցելու համար, որպես հիմնատակ առաջարկվում է
    - շերտ 2-ը / Գրանիտադիորիտներ, ամուր, հոծ, սպիտակահողագույն, տեղ-տեղ բեկորա-խճաքարային նստվածքներ /, որոնք ըստ սեյսմիկ հատկության (ՀՀՇՆ 20.04.2020թ-ի) 1-ին կարգ են:
      - ✓ Դիմադրությունը R= 7.0կգ/սմ$^2$
- Համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝ Amax=0,4g:
- Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ 22.01.24 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 12սմ:
- Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ բացակայում են:
- Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:
- Ուսումնասիրվող տեղամասում կառույցների հիմքերի փոսորակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի զննումը և համապատասխան եզրակացությունը պարտադիր է:
-

Երկրաբան՝ Հ. Տիտիզյան

## Օ Գ Տ Ա Գ Ո Ր Ծ Վ Ա Ծ   Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն   Ց Ա Ն Կ


1. ՀՀՇՆ 22.01.24 «Շինարարական կլիմայաբանություն

2.ՀՀ կառավարության որոշում N 1530-Ն առ 04.09.2003 թ. Ինժեներաերկրաբանական հետազննությունների նյութերի փորձաքննության Կարգը

3.ՇՆՉ 1-2.101- 2002 «Ինժեներաերկրաբանական հետազննություններ շինարարության համար»

4. ՀՀՇՆ 20.04.2020 Երկրաշարժադիմացկուն շինարարություն

5. ՍՆիՊ IV-2-84 Շինարարական նորմերի «Հողային աշխատանքներ» հավելված

6. ԳՕՍՏ 12071-2014 (Հողեր. Նմուշների ընտրություն, փաթեթավորում, տեղափոխում և պահպանում).

7. ԳՕՍՏ 58325-2018 (Հողեր. Դաշտի նկարագրություն(հետազոտության) ,

8. ԳՕՍՏ 5180-2015 Բնահողեր. Ֆիզիկական բնութագրերի լաբորատոր որոշման մեթոդներ.

9. ԳՕՍՏ 25100-2020 Բնահողեր. Դասակարգում.


1
2
Centre
H
3D
100 м

## Երկրաբանական կտրվածք 1-2
## Մ 1:100




| | | |
|---|---|---|
| Բարձրանիշ,մետր | 523.0 | 522.0 |
| Շինության սահման,մետր | | |

# Հորատանցք h1
Մ 1:100

| Խորություն | Պայմանական նշան | Հզորություն | Գրունտի նկարագրություն |
|---|---|---|---|
| 3.2մ | | 3.2մ | Ավազակավեր բացից-մուգ շագանակագույն,պինդ թանձրութ-յան միջին խոնավ,խճի,մանրախճի 15-20% պարունակութ-յամբ,մանրահատիկ,հոծ,տեղ-տեղ ավազային ենթաշերտով: Դրանք էլյուվիալ-դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներ են: |
| 10մ | | 6.8մ | Գրանիտադիորիտներ,ամուր,հոծ,սպիտակահողագույն,տեղ-տեղ բեկորա-խճաքարային նստվածքներ մոտ 25% ավազա-խճավազային լրացումով:Ինտրուզիվ առաջացումներ են: |

Բարձրանիշ-523մ
Հատականիշ-513մ






Հորատանցք 1
0.00մ-3.20մ- Ավազակավեր բացից-մուգ շագանակագույն, պինդ թանփրության միջին խոնավ, խճի, մանրախճի 15-20% պարունակությամբ, մանրահատիկ, հոծ, տեղ-տեղ ավազային ենթաշերտով ։ Դրանք էլյուվիա-դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներ են։Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՄՆԻՊ IV-2-84-ի (33 գ) III կարգ։

3.20մ-10.0մ- Գրանիտադիորիտներ, ամուր, հոծ, սպիտակահողագույն, տեղ-տեղ բեկորա-խճաքարային նստվածքներ մոտ 25% ավազա-խճավազային լրացումով։ Ինտրուզիվ առաջացումներ են։ Գրունտներն ըստ շահագործման դժվարության համաձայն (18բ) VI կարգ է։

## Հորատանցք h2
## Մ 1:100

| Խորություն | Պայմանական նշան | Հզորություն | Գրունտի նկարագրություն |
|---|---|---|---|
| 2.2մ |  | 2.2մ | Ավազակավեր բացից-մուգ շագանակագույն,պինդ թանձրության միջին խոնավ,խճի,մանրախճի 15-20% պարունակությամբ,մանրահատիկ,հոծ,տեղ-տեղ ավազային ենթաշերտով: Դրանք էլյուվիալ-դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներ են: |
| 10մ |  | 7.8մ | Գրանիտադիորիտներ,ամուր,հոծ,սպիտակահողագույն,տեղ-տեղ բեկորա-խճաքարային նստվածքներ մոտ 25% ավազա-խճավազային լրացումով:Ինտրուզիվ առաջացումներ են: |

Բարձրանիշ-522մ
Հատականիշ-514մ


Z·451




Հորատանցք 2

0.0մ-2.20մ- Ավազակավեր բացից-մուգ շագանակագույն, պինդ թանփրության միջին խոնավ, խճի, մանրախճի 15-20% պարունակությամբ, մանրահատիկ, հոծ, տեղ-տեղ ավազային ենթաշերտով : Դրանք էլյուվիա-դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներ են:Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՄՆԻՊ IV-2-84-ի (33[գ]) III կարգ:

2.20մ-8.0մ- Գրանիտադիորիտներ, ամուր, հոծ, սպիտակահողագույն, տեղ-տեղ բեկորա-խճաքարային նստվածքներ մոտ 25% ավազա-խճավազային լրացումով: Ինտրուզիվ առաջացումներ են: Գրունտներն ըստ շահագործման դժվարության համաձայն (18[բ]) VI կարգ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000804, 1-ին դաս

*(սերիան, համարը, դասը)*

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՆՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ

*(քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակը)*

ՏՐՎԱԾ Է

2024-09-13, «ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՏԻՏԻԶՅԱՆՆԵՐ» ՍՊԸ

*(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը,*

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ԱՎԱՆ, ԱՎԱՆ,ԲՐՅՈՒՍՈՎ, 62 Շ., 31 ԲՆ.

*գտնվելու վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնակատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)*

Գործողության ժամկետը՝ 13.09.2029թ.

*(օրը, ամիսը, տարեթիվը)*

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UG3D-B197-32E6-5B48**

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):